

7354



Հ. Յ. Դ. Ա Ա Յ Ա Յ Ո Ւ Թ Ի Ւ Ն


ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

(Հաստատուած Ժ.Ա. Ընդհ. Ժողովին կողմէ)



Ժ Բ Ն Ե Խ

1929



329.14

Հ-24



Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ



ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1682

ԲԲ2002

Գ Բ Ն Ե Կ

1929

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ



ԱՆԴԱՄՆԵՐ

1. Հ. Յ. Դաշնակցութեան անդամ կրնայ ըլլալ ամէն քաղաքացի, որ կընդունի կուսակցութեան ծրագիրն ու գործելակերպը, կենթարկուի անոր կանոններուն և որոշումներուն և ամէն ջանք կը թափէ իրականացնելու գանոնք:

2. Ամէն դաշնակցական պարտաւոր է անդամակցիլ խուժը մը և կատարել կուսակցութեան կողմէ իր վրա դրած բոլոր նիւթական և բարոյական պարտականութիւնները:

ԱՆՀԱՏ ԳՈՐԾԻՉՆԵՐ

3. Անհատ գործիչները երկու տեսակ են —
ա) Շրջուն գործիչ - բ) ներկայացուցիչ:

ա) Շրջուն գործիչ կը կոչուի այն ընկերը, որ կեղը կոմիտէի ընտրութեամբ կամ անոր հաւանութեամբ կը զբաղի քարոզութեամբ կեղը. կոմիտէի ըրջանին մէջ: Ան կրնայ զբաղիլ և կաղմակերպական գործերով, եթէ լիազօրած է իրաւասու մարմիններու կողմէ:

բ) Ներկայացուցիչ կը կոչուի այն ընկերը, որ Մարմնի մը կողմէ կուղարկուի որոշ վայր մը, յատուկ նպատակով և որոշ ժամանակով, որ ոկտղ է ճշտած ըլլայ իր վկայականին մէջ:



1595-2002

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

4. Հ. Յ. Դ. Դաշնակցութիւնն ունի հետևեալ ժողովները .—

- ա. Խմբական ժողով.
- բ. Խումբերու ժողով.
- գ. Ներկայացուցիչներու ժողով.
- դ. Շրջանային ժողով.
- ե. Բայրնական ժողով.
- զ. Ընդհանուր ժողով.

5. Վերոյիշեալ ժողովներէն կը բխին հետևեալ մարմինները .—

- ա. Խումբ կամ խմբի վարչութիւն.
- բ. Ենթակոմիտէ.
- գ. Կոմիտէ.
- դ. Կեդրոնակ. կոմ. (Մեկուսի կոմ.).
- ե. Հայաստանի Պատասխ. Մարմին.
- զ. Բիւրօ.

ԾԱՆՈԹ. Շրջանային ժողովի որոշումով իւմբը և Ենթակոմիտէն կարելի է փախարինել վարչական ուրիշ ձևերով՝ համաձայն տեղական պայմաններու :

Ժ Ո Ղ Ո Վ Ն Ե Բ

6. Խումբի բոլոր անդամներու գումարումը կը կոչւի խմբական ժողով :

7. Խմբական ժողովը որոշումներ կուտայ խումբին բոլոր գործերու մասին :

8. Խմբական ժողովը կ'ընարէ իր վարչութիւնը — խմբակիտ, քարոզուզար և հաւաքիչ

դահճապահ : Ան է դարձեալ, որ կ'ընտրէ իր ներկայացուցիչը ներկայացուցիչներու ժողովին համար :

Խումբերու ժողով

9. Մէկ կամ մի քանի մերձակայ վայրերու մէջ գտնւած բոլոր խումբերու գումարումը կը կոչւի խումբերու ժողով :

10. Խումբերու ժողովը կընարէ ենթակոմիտէ և որոշումներ կուտայ բոլոր խումբերուն վերաբերեալ գործերու մասին :

Ներկայացուցիչներու ժողով

11. Կոմիտէութեան շրջանի մը բոլոր խումբերուն ներկայացուցիչներու գումարումը կը կոչւի Ներկայացուցիչներու ժողով : Ներկայացուցիչ կընան ընտրւիլ և խմբակետները :

12. Խումբերը ներկայացուցիչ կ ընարեն իրենց անդամներու թիւին համեմատութեամբ՝ համաձայն շրջանի ներքին կանոնագրի տրամադրութեանց :

13. Ներկայացուցիչներու ժողովը ա) որոշումներ կուտայ կոմիտէութեան բոլոր գործերու մասին, բ) կընարէ իր պատգամաւորը Շրջանային ժողովի համար, գ) կընարէ կոմիտէ : Կոմիտէի անդամները կընտրւին ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ :

ԾԱՆՈԹ.— Այն վայրերուն մէջ, որը կազմակերպութիւնը գաղտնի է, առաւելագոյն բնէ շահողները կը համարւին ընտրւած :

ԵՐԳԱՆԱՑԻՆ ԺՈՂՈՎ

14. Կեդր. Կոմիտէութեան շրջանի գերազոյն օրդանն է Շրջանային ժողովը, որ կը գումարէի տարին մէկ անգամ, Կեդր. Կոմիտէի հրաւակը:

ԾԱՆՈԹ . — Անհրաժեշտ պարագային կրթայ արտակարգ Շքանիային ժողով գումարուի Բիւրօի , կամ Կեդր . Կոմիտէի հրաւերով և կամ շրջանի կոմիտէներու մէկ երրորդին պահանջով :

15. Շըջանային ժողովը կը բաղկանայ Կեդր .
կոմիտէի , շրջանի կոմիտէներու և շրջանի ընկեր-
ներու պատգամաւորներէն : Կեդր . Կոմիտէն և
շրջանի կոմիտէները կուտան մէկական պատգամա-
ւոր , իսկ շրջանի ընկերները՝ իրենց թիւին համե-
մատ , համաձայն ներքին կանոնագրի տրամադրու-
թեանց :

ԾԱՆՈԹ .— Բիւրօի անդամը կրնայ մաս-
նակցիլ Շքամային ժողովին ձայնի իրա-
ւումնով :

16. Շրջանային ժողովը կընտրէ Կեդր. Կոմիտէ զաղանի քէարկութեամբ և ձայներու երկու-երրորդի առաւելութեամբ:

ԾԱՆՈՅ. — Այն վայրերու մէջ,ուր կազմակերպութիւնը գաղտնի է, առաւելագոյն բնէ շահողները կը համարին ընտրած:

17. Շրջանային ժողովը ա) կը քննէ և կը հաստատէ կեղու. Կոմիտէի հայիները. բ) կը

Հաստատէ առաջիկայ տարւան նախահաշիւը, համաձայն Ընդհանուր Ժողովի որոշած սակերուն. գ) կը մշակէ առաջիկայ տարւան դործունէութեան ծրագիրը, համաձայն Ընդհանուր Ժողովի որոշումներուն. դ) կը քննէ և կը լուծէ իր շրջանին մէջ ծաղած վէճերը. ե) կը նորէ կեզր. Կոմիտէ և պատղամաւորներ Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովի համար:

ԱՅՑՈՒԱԿԱՆ ԺՈՂՈՎ

18 — 24 .

Հ.Յ.Դ. ԵՆԴԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

25. Հերթական Ընդհանուր Ժողով հրաւի-
քելու ժամանակը կորոշէ նախորդ Ընդհանուր
Ժողովը, իսկ արտակարգ պարագաներու մէջ կը
հրաւիրէ Բիւրօն, համախորհուրդ Հայաստանի
Պատասխանատու մարմնի հետ:

26. ԲնդՀանուր Ժողովին կը մասնակցին
Քիւրօէն, Շրջանային Ժողովներէն, Կեդր. Կոմի-
տէներէն, Երկրի և Եւրոպայի դաշնակցական ու-
սանողական միութիւններէն մէկական պատգա-
մաւոր:

ԾԱՆՈԹ .— Ծբանային ժողովները կըր-
նան մէկէ աւելի պատգամատոր ուղարկել ,
եթէ կազմակերպւած անդամներու քիւսվ
մէկէ աւելի կեդր . Կոմիտէութեան սակ
ունին :

27. Ընդհանուր ժողովը կրնալ գուրսէն ըն-

Կերներ հրաւիրել խորհրդակցական ձայնով՝ իր անդամներուն մէկ-երրորդին համեմատութեամբ:

28. Բոլոր Կեդր. Կոմիտէները պարտաւոր են Ընդհանուր ժողովէն վեց ամիս առաջ Բիւրօին ուղարկել ցանկն այն հարցերու, որոնց համար կը պահանջւի Ընդհանուր ժողովի որոշումը: Օգտագործելով այդ ցանկերը Բիւրօն կը կազմէ Ընդհանուր ժողովի օրակարգը և կուղարկէ Կեդր. Կոմիտէներուն, ժողովէն առնւազն երեք ամիս առաջ:

29. Պատգամաւորները կրնան առաջարկել նոր հարցեր, որ նկատի կառնեին պաշտօնական օրակարգի հարցերու քննութենէն յետոյ:

30. Բիւրօի և Կեդր. Կոմիտէներու պատգամաւորները պարտաւոր են Ընդհ. ժողովին դրաւոր զեկուցում և հաշետուութիւն ներկայացնել, հաստատած մարմիններու կնիքով և անդամներու ստորագրութեամբ: Այս պայմանը չլրացնող պատգամաւորները կը դրկւին ձայնի իրաւունք և ժողովին կը մասնակցին խորհրդակցական ձայնով:

31. Ամէն պատգամաւոր պարտաւոր է իր հետքերել իր շրջանի մեծամասնութեան և փոքրամասնութեան կարծիքները, բայց քէշարկութեան ձայն կուտայ ըստ իր համոզման:

32. Ընդհանուր ժողովը օրինաւոր կը համարւի երբ ներկայ են պատգամաւորներու երկու-երրորդը:

33. Ընդհ. ժողովը ծրագրային և կանոնագրական հարցերը կը վճռէ ներկաներու երկու-երրորդի մեծամասնութեամբ:

34. Ամէն պատգամաւոր ունի մէկ ձայն միայն:

35. Պատգամաւորը չի կրնար իր ձայնը ուրիշին փոխանցել առանց իր մարմնի հաւանութեան:

36. Ընդհ. ժողովի որոշումները կը համարւին վերջնական, երբ ատենազրութիւնները կը ստորագրւին և ժողովը կը յայտարարւի փակւած:

37. Ընդհ. ժողովը չի կրնար հիմնական փոփոխութիւններ մտցնել չ. Յ. Դաշնակցութեան նպատակներուն և կազմակերպութեան սիստեմին մէջ, եթէ այդ հարցերը նախապէս չեն յանձննած կեդր. Կոմիտէներու քննութեան:

ԽՈՒՄԲ ԿԱՄ ԽՈՒՄԲԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

38. Հինդ կամ աւելի դաշնակցականներ միասին կը կազմեն խումբ: Խումբի ներքին կազմակերպութիւնը և աշխատանքները կորոշւին շրջանի ներքին կանոնագրով:

39. Նոր անդամներ կը նորունեին խումբի անդամներու երկու-երրորդի քէներով և կոմիտէի վաւերացումով:

ԾԱՆՈԹ. — Նոր ընդունուած անդամը մինչև երեք ամիս կը մասնակցի խումբի ժողովներուն, իբր թեկնածու, որմէ յետոյ

կրնայ ստանալ կուսակցականի բոլոր իրաւունքները :

ԵՆԹԱԿՈՄՄԻՏՀԵ

40. Մէկ կամ մի քանի խումբեր, որոնց անդամներուն ընդհանուր թիւը 30-էն պակաս չէ, կրնան ընտրել ենքակոմիտէ, որու ներքին կազմակերպութիւնը և աշխատանքները կորոշեն շրջանի ներքին կանոնագրով :

Կ Ո Մ Ի Տ Է

41. Որևէ շրջան կրնայ ընտրել կոմիտէ, երբ առնւազն 50 անդամ ունի :

42. Կոմիտէն կը բաղկանայ 3-5 անդամներէ . կը նույնականացն իր ժողովի կամ խումբերու ներկայացուցիչներու ժողովին կողմէ : Ան կը վարէ իր շրջանի կուսակցական դործերը :

ԾԱՆՈԹ .— Կոմիտէի անդամ կրնան ընտրիլ այն ընկերները, որ առնւազն երկու տարի եղած են կազմակերպութեան անդամ : Նորակազմ շրջաններու համար կեղր . Կոմիտէն կրնայ գեղջել այս պայմանը :

43. Կոմիտէն կրնայ տեղական պէտքերու վրա ծախսել իր եկամուտին 10% միայն : Մնացածը կը յանձնէ կեղր . Կոմիտէին :

ԾԱՆՈԹ .— Եկամուտ կը համարին . ա) Կոմիտէի գանձարկեր մտած անդամավճարները և բ) արդիւկի այն ձեռնարկներուն, որ կը կատարւին գերադաս մարմիններու

կրահանգով կամ կուսակցութեան ընդհանուր նպատակներու անունով :

44. Կոմիտէն պարտաւոր է իր նախաձեռնութեամբ և տեղական կազմակերպական պահանջներու համար կատարւած ձեռնարկներուն արդիւնքին 20% յանձնել կեղր . Կոմիտէին :

ՄԵԿՈՒՍԻ ԿՈՄՄԻՏՀԵ

45. Մեկուսի կոմիտէ կը նույնականացն որ առնւազն 200 անդամ ունի և գտնւելով հեռաւոր կամ առանձնացած վայրի Պէջ, չի կրնար կապուիլ կեղր . Կոմիտէի մը շրջանին հետ :

46. Մեկուսի կոմիտէն կը բաղկանայ 5-7 անդամէ և կը նույնականացն իր ժողովին ժողովին կողմէ :

47. Մեկուսի կոմիտէն ունի կեղր . Կոմիտէի բոլոր պարտականութիւնները և կը վայելէ անոր բոլոր իրաւունքները, բացի կուսակցական թերթ հրատարակելու իրաւունքէ (Յօդ. 16) :

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄՄԻՏՀԵ

48. Շրջանը կը նույնականացն ունի կոմիտէ, եթէ ունի առնւազն 500 անդամ :

49. Կեղր . Կոմիտէն կը բաղկանայ 5-7 անդամէ և կը նույնականացն իր ժողովին :

ԾԱՆՈԹ .— Կեղր . Կոմիտէի անդամ կը բնան ընտրիլ այն ընկերները, որ նախապէս եղած են Կոմիտէի անդամ կամ առնւազն հինգ տարի կազմակերպութեան անդամ :

50. Կեդր. Կոմիտէն վեց ամիսը անդամ մը
Բիւրօխն կը զրկէ մանրամասն հաշետւութիւն իր
գործունէութեան և չըջանի կացութեան մասին:

51. Կերպ. Կոմիտէն ունի իր կոմիտէլ «Հ. Յ. Դաշնակցութեան Խ կերպ. Կոմիտէ» մակադրութեամբ:

52. Կեղը. Կոմիտէն կը վարէ իր ըջանի
բոլոր գործերը և կը հսկէ իրեն ենթակայ կոմի-
տէներու, մարմիններու և ժողովներու գործու-
նէութեան վրա:

53. Շրջանի բոլոր արտաքին յարաքերութիւնները կը կատարեմն կեղքը. Կոմիտէի միջոցով կամ անոր գիտութեամբ և հրահանդով:

54. Կեզր. Կոմիտէն իր բոլոր փաստաթուղթերը և յեղափոխական-պատմական նշանակութիւն ունեցող դրութիւններն ու իրերը Շրջանային ժողովէ յետոյ կուղարիէ Բիւրոին:

55. Կեդր. Կոմիտէն կը հսկէ, որ կոմիտէն երը կուսակցական տուրքը գանձեն Շրջանային ժողովի որոշած սակին համեմատ և կը քննէ կոմիտէներու դույքի և դրամական հաւելներու:

56. Կեդր. Կոմիտէն բացի կուսակցական
տուբքերէ կրնայ ստեղծել եկամուտի ուրիշ աղ-
բիւրներ, համաձայն Շըշանային ժողովի որոշ-
ման (Հանդանակութիւն, դանազան ձեռնարկներ
և առն) :

57. Ամէն կեղը . Կոմիտէ պարտաւոր է Հ.Յ. Դաշնակցութեան Օրը հանգանակութիւն կատարել ընկերներու և համակիրներու շրջանին մէջ և ամ-

Պողջ արդիւնքը վստանցել հիւրօին։ Ամէն ընկեր պարտաւոր է մասնակցիլ այդ հանգանակութեան, տրամադրելով առնւազն իր մէկ միջին օրականը։

58. Կեղը . կոմիտէն իրաւունք չունի կադ-
մակերպական գրամքներէն գումարներ յատկացնե-
լու քոյլ մարմիններու կամ անհատ ընկերներու:

59. Կերպ. Կոմիտէն պարտաւոր է առաջին
հերթին ապահովել Ընդհանուր ժողովի կողմէ իր
շրջանին բաժին հանած սակերու լրացումը։ Իսկ
տեղական ծախքերը պիտի կատարէ Շրջանային
ժողովի հաստատած նախահաշւին համաձայն։

ԾԱՆՈԹ. — Յառուկ Եկամուտները պիտի
գործածին իրենց նպատակին կամ պիտի
մնան անձեռնվյալի:

60. Կեղբ . Կոմիտէն վեց ամիսը մէկ անդամ
պարտաւոր է իր Հաշխիները ուղարկել Բիւրօին ,
վաւերացւած կեղբ . Կոմիտէի կնիքով և անդամ-
ներու ստորագրութեամբ :

61. Այս կեղը. կոմիտէն, որ չի կատարել
իր նիւթական պարտականութիւնը և հաշիւ չի
ներկայացներ Բիւրօխն՝ կը համարւի լուծւած։
Բիւրօն (իսկ խորհրդային երկիրներու մէջ Պա-
տասխանատու Մարմինը) անոր տեղ կը նշանակէ
առժամեայ մարմին մը, որ կը վարէ շրջանի
գործերը մինչև նոր կեղը. կոմիտէի ընտրու-
թիւնը։

ԵՐԿՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Հայաստանի Պատասխանառու Մարմին

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԻՒՐԾ

75. Կուսակցութեան գերագոյն գործադիր մարմինն է Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրօն:

76. Բիւրօն կընտրէ Ընդհանուր Ժողովի կողմէ, դաշտնի քէչարկութեամբ և ձայներու երկու-երրորդի մեծամասնութեամբ: Բիւրօն անդամներուն թիւը կորոշէ Ընդհանուր Ժողովը:

77. Բիւրօն անդամները ինքնակամ հրաժարելու իրաւունք չունին:

78. Բիւրօն կը հսկէ, որ ճշտիւ գործադրւին Ընդհանուր, Ռայոնական և Շրջանային Ժողովներու որոշումները, կազմակերպական կանոնադիրը, և որ Ռայոնական և Շրջանային Ժողովները չհակասեն Ընդհանուր Ժողովի որոշումներուն:

79. Բիւրօն պարբերաբար տեղեկութիւններ կուտայ Կեդր. Կոմիտէներուն՝ շրջաններու և իր գործունէութեան մասին:

80. Կեդր. Կոմիտէներու պահանջով կամ անհրաժեշտ պարագային Բիւրօն ընկերներ կուղարկէ շրջանները, Կեդր. Կոմիտէներու կազմը դորացնելու համար: Այս ընկերները կը վայելին ձայնի իրաւունք Կեդր. Կոմիտէի նիստերուն:

81. Բիւրօն կը բաշխէ կուսակցական եկամուտները, համաձայն Ընդհանուր Ժողովի հաստատած նախահաշվին:

82. Բիւրօն միայն իրաւունք ունի կուսակցական կնիքներ պատրաստելու և յանձնելու մարմիններուն:

ԾԱՆՈԹ.— Կուսակցական կնիքներու վրա զինանշան կրնան գործ ածել միայն Բիւրօն, Կեդրունական և Մեկուսի Կոմիտէները:

83. Կուսակցութեան ընդհանուր եկամուտները կը կեղունանան Բիւրօնի մօտ: Ան կը հետեւ եկամուտներու կանոնաւոր գանձումին և ծախսումին:

84. Բիւրօն ամէն տարեվերջին կը քննէ իրեն ենթակայ մարմիններու հաշիւները և արդիմքը կը հաղորդէ Կեդր. Կոմիտէներուն:

85. Բիւրօն կը պահէ իր որոշումներուն կանոնաւոր արձանագրութիւնը:

86. Բիւրօն կը հրատարակէ պաշտօնական օրգաններ և կընէ ուրիշ հրատարակութիւններ՝ հայերէն և օտար լեզուներով:

87. Բիւրօն կը հսկէ, որ կուսակցական թերթերը չհակասեն Ընդհանուր Ժողովի որոշումներուն և գծած ուղղութեան:

88. Իր անդամներուն միջև աշխատանքը բաժնելով հանդերձ՝ Բիւրօն հաւաքարար պատասխանատու է Ընդհանուր Ժողովին՝ իր բոլոր գործերու համար:

ԴՐԱՄՄԱԿԱՆ ՄԻՋԱՑՆԵՐ

89. Հ. Յ. Դաշնակցութեան դրամական միջոցները կը կազմեն.— ա) անդամավճարները, բ) Դաշնակցութեան Օրւայ տուրքը. գ) հանդանակութիւն. դ) զանազան ձեռնարկներէ գոյացած:

գումարներ. է) պատահական եկամուտներ ու նույներ:

ԾԱՆՈԹ. — Ամէն դաշնակցական պարտաւոր է անդամատեսք ունենալ, ուր պէտք է փակցնէ փոխան անդամավճարի նուացած դրամանիշերը: Դրամանիշերու և անդամատեսքերու գործածութիւնը պարտադիր չէ այնտեղ, ուր հնարաւորութիւն չկայ:

90. Բոլոր դաշնակցականները, առանց բացառութեան, պարտաւոր են անդամավճար տալ Երջանային ժողովներու որոշած սակեն համեմատ:

91. Ամէն դաշնակցական պարտաւոր է ամիսը մէկ իր անդամավճարը յանձնել տեղական մարմին:

ԾԱՆՈԹ. — Երեք ամիս շարունակ անդամավճար չտուղ ընկերը կը զրկի ճայնի իրաւունքէ:

92. Դրամի հանդանակութեան իրաւունքը վերապահւած է միայն Բիւրօն, Հայաստանի Պատասխանատու Մարմնին և Կեդր. Կոմիտէններուն:

ՀԱՇԽԱԿԱՆ

93. Դաշնակցական ամէն մարմին պարտաւոր է երեք ամիսը անդամ մը վճարել իրեն բաժին ընկած կուսակցական սակը իր գերազաս մարմին:

94. Ամէն մարմին պարտաւոր է իր ստացած գումարին համար տալ դրամանիշ կամ կնքւած ընկալադիր՝ գանձապահի ստորագրութեամբ:

95. Բոլոր մարմինները պարտաւոր են իրենց հաշիւնները պահել կանոնաւոր հաշւական ձևով:

96. Ամէն մարմին պարտաւոր է երեք ամիսը անդամ մը իր հաշիւնները ներկայացնել գերազաս մարմնին, հաշւապահական ձևով:

ԾԱՆՈԹ. — Կեդր. Կոմիտէնները իրենց հաշիւնները կուղարկեն Բիւրօնին կամ Հայաստանի Պատասխանատու Մարմնին, վեց ամիսը անգամ մը:

97. Բոլոր մարմինները պարտաւոր են իրենց հաշիւնները փակել դեկտ. 31-ին և տարեկան հաշիւը ներկայացնել Գերազաս Մարմնին, ուղարկելով այս հաշւեկշիռ. բ) մուտք ու ելքի օրակաշիւ (մասսակի տեսրակ) գ) դոյլերու և կայքերու շուցակ (մնալանք-էր), ուր պէտք է նշանակւած բլայ գայքերու և կայքերու գնման արժէքը:

98. Բիւրօն պարտաւոր է պահել հաշւեմատեան մը, ուր պիտի արձանագրուին Կեդր. Կոմիտէններու մուտքն ու ելքը, համաձայն պարբերաբար հասած հաշիւններու:

99. Բիւրօն պէտք է ունենայ Մարմիններու ելեմուտքի արձանագրութեան տեսրակ, ուր պումարները պէտք է բաժնւին համաձայն նախահաշւի:

100. Այն Մարմինները, որ քաղաքական պատասխաններով չեն կրնար երկար պահել հաշւեմատանները, պէտք է իրենց հաշիւններն ուղարմատեանները, պէտք է իրենց հաշիւնները,



կեն Բիւրօին, առանց սպասելու եռամսեայ կամ վեցամսեայ հաշւետութեան:

101. Արգիլած է որևէ հիմնադրամ (Փոնդ) գործածել տարբեր նպատակի:

102. Արգիլած է կուսակցական միջոցներէ որևէ մէկուն դրամ տալ փոխ, կամ իրը նպաստ կամ շահագիտական նպատակներով:

103. Բիւրօն կը մշակէ հաշւապահական ընդհանուր հրահանդներ, համաձայն Ընդհ. Ժողովի որոշումներուն և պարտադիր՝ Կեդր. Կոմիտէներու համար:

104. Փոխառութեան իրաւունքը վերապահաւած է միայն Բիւրօին և Կեդր. Կոմիտէներուն:

105. Փոխառութիւնը կը կատարէի մարմնի անդամներու անձնական պատասխանատութեամբ, բայց ոչ կազմակերպութեան անունով:

106. Բիւրօի ընդհանուր եկամուտին 5% կը մնայ սնտուկը, յեղափոխական հիմնադրամ կազմելու համար: Այդ գումարին գործածութեան իրաւունքը վերապահաւած է Ընդհանուր Ժողովին:

ՄԱՐՏԱԿԱՆ-ՄԱՐԶԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐ

107. Կեդր. Կոմիտէները իրենց շրջաններուն մէջ պարտաւոր են կազմակերպել պատանեկան, մարզական և մարտական խումբեր, վերջինները դաշնակցական ընկերներէ: Այսոնց գործունէութիւնը և իրաւասութեանց սահմանները կորոշութիւնառուկ կանոնադրութեամբ:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

108. Երկրի և Եւրոպայի գաշնակցական ուսանողները կրնան կազմել ուսանողական միութիւններ:

109. Ամէն Ուսանողական Միութիւն իրը առանձին մարմին կազ պահելով Բիւրօի, Հայաստանի Պատասխանատու Մարմնի և քոյր միութեանց հետ՝ ենթակայ է իր շրջանի Կեդր. Կոմիտէին և պարտաւոր է գործնականապէս մասնակցիլ անոր աշխատանքներուն:

110. Ուսանողական Միութիւնները իրաւունք ունին մէկական պատգամաւոր տալու Ընդհանուր Ժողովին, եթէ իրենց անդամներու թիւը եօթանասունհինգէն վար չէ:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

111. Կուսակցութեան կեդրոնական օրդանն է «Դրօչակ»-ը, որ կը հրատարակէի և կառաջնորդուի Ընդհանուր Ժողովէն տրւած հրահանդներով:

112. Ուայրնական Ժողովն իրաւունք ունի իր Ռայոնի համար պաշտօնական օրդան հրատարարակութեան տալով անոր յատուկ հրահանդներ և ի հարկին դրամական միջոցներ:

113. Կեդր. Կոմիտէները Շրջանային Ժողովի որոշումով կրնան իրենց շրջանի մէջ կուսակցական թերթ հրատարակել, առանց ուղղակի բեռ դառնալու կուսակցութեան սնտուկին վրա:

ԾԱՆՈԹ. — Այն կեդր. Կոմիտէները, ոք չեն լրացներ կուսակցական սակը, իրաւունք չունին կուսակցական թերթ իրատարակելու:

114. Դաշնակցական անհատները իրաւունք չունեն հանրային-քաղաքական թերթ հրատարակելու, առանց Բիւրօնի կամ Կեդր. Կոմիտէի հաւանութեան և հակակչովն:

115. Կուսակցական բոլոր թերթերը պարտաւոր են առաջնորդւիլ կաղմակերպութեան ծրագրով և Ընդհ. Ժողովի որոշումներով: Կերպոնական օրդանի ուղղութիւնը և Հայեացքները հիմնական հարցերու մասին պարտագիր են կուսակցական բոլոր թերթերու համար:

116. Բիւրօն և Կեդր. Կոմիտէները պարտաւոր են աշալուրջ հսկողութիւն ունենալ կուսակցական թերթերու ուղղութեան վրա: Բիւրօն կրնայ ոչ-դաշնակցական յայտարարել այն թերթերը, որ կը շեղին Դաշնակցութեան ծրագրէն և Ընդհ. Ժողովի որոշումներէն: Անսասոող Կեդր. Կոմիտէները կը լուծւին, խմբագիրը կը հեռացւի և թերթը կը խափանւի Բիւրօնի կողմէ:

ԾԱՆՈԹ. — Սոյն յօդւածի տւած իրաւունքին կօգուի նաև Հայաստանի Պատասխանառ Մարմինը իր Ռայոնին մէջ:

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ Անհատ ընկերներ

117. Կազմակերպութեան ամէն անդամ պարտաւոր է ենթարկւիլ կուսակցական մարմիններու և ժողովներու որոշումներուն: Անսասոողները պատասխանառու կը նկատւին:

118. Կարգապահական տեսակէտով՝ կազմակերպութեան ամէն անդամ պատասխանառու է այն մարմնին, որու իրաւասութեան դէմ գործւած է յանցանքը:

119. Կուսակցական մարմինները և ժողովները կրնան իրենց ենթակայ անդամներու մասին կարգապահական պատիմներ տնօրինել, բայց նախապէս պարտաւոր են պաշտպանելու հնարաւորութիւն տալ ենթակային:

ԾԱՆՈԹ. — Գերադաս մարմնի մը անդամը ենթակայ չէ ստորադաս մարմնի մը կամ ժողովի մը պատժական տնօրինութեանց: Ստորադաս մարմինը կամ ժողովը կրնայ իր դիտողութիւնը յանձնել այն մարմնին, որուն անդամն է ենթական:

120. Պատժական ամէն որոշում պէտք է տրւի ձայններու երկու-երրորդը մնաժամանութեամբ:

121. Մարմիններու և ժողովներու պատժական որոշումները գերչնական են, եթէ բողք չկայ անոնց դէմ: Ժողովնել կարելի է անմիջօրէն գերադաս մարմնին, եթէ որոշումը տւած է ստո-

բաղաս ժողով մը և անմիջօրէն գերազաս ժողովին, եթէ որոշումը տւած է ստորագաս մարմին մը: Բողոքառու մարմիններու և ժողովներու որոշումները վերջնական են:

ԾԱՆՈՅՏ. — Պատժական իրաւասութեան տեսակէտով ժողովները գերադաս են քան անհնցմէ բխած մարմինները:

122. Կարգապահական պատիմներու գէմ բողոքել կարելի է մինչև երեք ամիս, սկսելով որոշումը հաղորդելու օրէն: Բողոքառու մարմինը (ինչպէս և ժողովը) հարցը կրնայ վերաքննել կամ ինքը կամ յատէկ դատական ատեանի յանձնելով:

123. Բոլոր մարմինները և ժողովները կըրնան իրենց շարքերէն հեռացնել անդամ մը:

124. Տեղական շարքերէ հեռացւած անդամի մասին պէտք է աեղեկութիւն հաղորդւի Բիւրօնին և բոլոր մարմիններուն:

125. Շրջանի մը շարքերէն հեռացւած անդամ մը չի կրնար ուրիշ շրջանի շարքերուն մէջ առնելի:

126. Տեղական շարքերէ հեռացւած անդամ մը, երբ զգաստանայ, կրնայ նորէն իր կամ ուրիշ շրջանի մը շարքերու մէջ առնելի հեռացնող մարմին կամ ժողովին հաւանութեամբ:

127. Դաշնակցական ընկերներու այն վէճերը, որ ծագած են կազմակերպական հողին վրա, կը լուծւին պատկան մարմնի կամ անոր կազմած դատական ատեանի միջոցով:

128. Դաշնակցութենէ հեռացման կամ արտաքսման որոշում կրնան տալ միայն կ. Կոմիտէները, Պատասխանատու Մարմինը, Բիւրօն և Շրջանային, Ռայոնական և Հ.Յ.Դ. Ընդհանուր ժողովները:

129. Բիւրօն կրնայ հեռացման գործերու վերաբնութիւն առաջադրել կեղը. Կոմիտէներուն և Շրջանային ժողովներուն, եթէ բողոքարկուն օրինական թերութիւններ է մատնանշած պատժի անօրինութեան մէջ:

130. Արտաքսման որոշումները նախապէս կը հրատարակւին «Դրօշակ»-ի մէջ, որմէ յետոյ միայն կրնան արտատպել կուսակցական միւս թերթերը:

131. Հարկեցուցիչ պարագաներու մէջ, Բիւրօն իր պատասխանատութեամբ կրնայ ընկեր մը հեռացնել կազմակերպութենէն և իր որոշումը հրատարակել «Դրօշակ»-ի մէջ: Այս պատիժը կրնայ վերաքննւիլ Հ.Յ.Դ. Ընդհանուր ժողովն մէջ, եթէ ենթական բողոքած է:

ՄԱՐՄԻՆՆԵՐ

132. Կուսակցական մարմիններու և ժողովներու փոքրամասնութիւնները պարտաւոր են ենթարկել մեծամասնութեան որոշումներուն:

133. Գերազաս մարմին մը կամ ժողով մը կրնայ լուծել անմիջօրէն իրեն ստորագաս մարմին մը կամ ժողով մը, եթէ անոր ընթացքը նկատէ ապօրինի և հակակուսակցական:

134. Ստորադաս մարմիններու միջև ծագած կազմակերպական վէճերը կը լուծէ անմիջօրէն գերադաս մարմինը կամ ժողովը:

135. Պատժական որոշումներու դէմ բողոքելու պարագային, մարմինները և ժողովները պէտք է հետեւին անհատ լնկերներու բողոքի համար սահմանւած կարգին (յօդ. 121):

136. Մարմին մը չի կրնար ուրիշ մարմնի չքանին մէջ որևէ ձեռնարկ կատարել, առանց վերջինի դիտութեան:

137. Շրջանի մը Գերադաս Մարմինը կրնայ լուծւած համարել ստորադաս որևէ մարմին, եթէ ան կորսնցնէ իր մեծամասնութիւնը:



2013



